կարդացուելով Հանդիսականաց ձեռքէն ընդունեցան իրենց արժանեաց պսակը, գերապատիւ Լախագահը համառօտապէս պատասխանեց ուսմանց Տեսչին խօսքերուն և յորդորեց զմանկունս 'ի Ճշմարիտն աստուածպաշտութիւն, որ է հիմն և առաջնորդ ընկերական կեանաց, միջոց առնելով զուսմունս հասանելու այն ծայրագոյն իմաստութեան որ է Աստուած. յիշեցուց իրենց պարտքն որ ունին առ մեծ երախտապարտ Աբերար վարժարանիս և առ Ուսուցիչսն իրենց բարեբաւութեամբն և ուսումնասիրութեամբը, և քաջալերեց որ իրենց ջանքն աւելցընեն և ևս յառաջանալու մնացած սովվելիք ուսմանց տարիներուն մէջ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՍԱՐԴԵՆԻ

Ցիր սարդենուոյ երբեմն ի հող հարբատեալ
Լոյս զոյգ յերկինս աղերս արկի ես խոնարհ
Օ՛ի աչեսցէ մատաղ թրփիկն օդապար
Ի զարդ ապա երգաբանից եւ ի փայլ.
Լոյս զոսկի թեւսն ի Օ՛ենիւռէն ես հայցեմ
Սրփռել ըզզուարթ ոստովքն ի կէս ապրիլի.
Լոյս կաշկանդեալ ի պարաւանդս ուժգնակի
Խիստ Հիւսիսակ՝ մի անցուսցէ ինչ դրժխեմ։
Գիտեմ զի տունկըս, դից Փեբեայ սիրական,
Յուշիկ աչէ, շատ իսկ յուշիկ ի հասակ
Այլոց բնաւից որ յարեգդէմ յերկրիս կան.
Այլ ընդ յամենն երկայն զիս ոչ վըշտագնէ,
Օ՛ի եւ ի մեզ արժանաւորն ի պըսակ
Մեծաւ Ճրգամբ եւ յամրագոյն իսկ յառնէ։

ՄԼՆԾԻՆԻ

ՑԱՂԲԵՐԱԿՆ

Աղբիւր զեղուն ու անապակ
Օ՛ենիւռից վայր ընտանի,
Որոյ մրրմունջդ անուշակ
Հառաչանաց նըմանի,
Ա՛հ, զի սիրուն է բլուրն այն,
Որ քոց յալեաց արծաթի
Առնու զպըճնանս իւր համայն.
Օ՛ի հեշտ անդոյրն անտաւիկ,
Ուր ի շինից գամ հեռի
Հանգչել յըստուեր զովայիկ։